ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԻՐ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 34-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1 հոկտեմբեր 1989 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրեցեալ ժողովուրդ Մեր որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի:

Անցան երեսունչորս տարիներ այն օրից, երբ Աստուծոյ ողորմութեամբ և մեր Սուրբ Եկեղեցու ու ժողովրդի կամքով կոչուեցինք ստանձնելու հայոց առաքելական Եկեղեցու առաջին սպասաւորի պատասխանատուութիւնը:

Մեր գահակալութեան նախորդ տարեդարձները եղել էին ուրախ առիթներ, անդրադառնալու Մեր գործունէութեան արդիւնքներին և հետագայ եկեղեցաշէն ծրագրերին: Այս տարի այդ պարագան չէ: Մենք բոլորս այս օրերին հեռու ենք ուրախ լինելուց: Մեր ցաւատանջ սպասումները արցախեան դատի արդար լուծման, մեր հայրենի աշխարհի դառնօրէն վիրաւոր վիճակը, իբրև հետևանք անցեալ Դեկտեմբերի 7-ի ահարկու երկրաշարժի, մթագնել են մեր կեանքի մթնոլորտը ծանր մտահոգութիւններով:

Այս պահին, այս աղօթքի և ուխտի պահին, Մեր սրբազան պարտքն ենք նկատում Մեր արտի խօսքը ուղղել մեր ողջ ժողովրդին, որ ամուր պահի պահպանի՝ ապրելու, գոյատևելու իր կամեցողութիւնը, իր վէրքերը բուժելու, տոկալու և դժուարութիւնները յաղթահարելու քաջութիւնը, որ վառ պահի յոյսի կանթեղը և երազանքը նոր վերածնունդի:

Թող որ՝ «ոչք վարէին ապտասուօք՝ ցնծութեամբ հնձեսցեն» (Սաղմոս ՃԻԵ 5):

Եւ, ո՞վ գիտէ, գուցէ այս աղէտները նոր փորձութիւններ են մեր բազմադարեան պատմութեան ճանապարհի վրայ, որպէսզի դրանք յաղթահարելով, մեր ազգը հասնի ոգեկան նոր բարձունքների, զի տառապանքով միայն կարելի է հասնել աստղերին:

Թէև տխուր ենք ու մտահոգ, սակայն ոչ յուսահատ: Յուսահատութիւնը քրիստոնեայի համար մեղաւոր վիճակ է: Յոյսը հաստատ է և զէնք պայքարի և ճանապարհ յաղթանակի:

«Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ» (Հռոմ. Ե 5):

Աւելին, նոյնիսկ մխիթարութեան պահեր ենք ապրում այս իսկ օրերին:

Այո՛, մխիթարական է տեսնել, թէ ինչպէս աղէտեալ շրջանները հետզհետէ վերաշինում են, օժտւում բազմահազար բնակարաններով, դպրոցական շէնքերով, հիւանդանոցներով և գործարաններով, չարքաշ աշխատանքովը մեր ժողովրդի և օգնութեամբը Խորհրդային Միութեան տարբեր հանրապետութիւնների ու արտասահմանի մարդասէր կազմակերպութիւնների:

Մխիթարական է, որ աղէտից յետոյ Խորհրդային Միութեան տարբեր շրջաններում ապաստան գտած տասնեակ հազարաւոր ընտանիքներ, իրենց երեխաներով, արդէն վերադառնում են իրենց ծննդավայրերը, և նրանցից շատերն իրենց ձեռքերով նոր համեստ բնակարաններ են կառուցում:

Ով այցելում է այս օրերին աղէտեալ շրջանները, ամենուրեք տեսնում է լարուած աշխատանք և գոհացուցիչ իրագործումներ, ազնիւ մարդկանց ձեռքով կատարուած հայրենի պետութեան լայն միջոցառումներով: Մեծապէս յուսադրիչ է այս իրողութիւնը և ստոյգ գրաւական, որ առաջիկայ մի քանի տարիների ընթացքում երկրաշարժից աւերուած քաղաքներն ու շէները պիտի վերագտնեն իրենց նիրեմնի բնականոն կեանքը: Հայրենի կտուրի տակ նորից կը լինի հարսանիք և մկրտութիւն:

Մենք մխիթարուած ենք ոչ միայն նիւթական շինարարութեան իրագործումներով, այլև ազգային ինքնագիտակցութեան ու արժանապատուութեան զարմանալի զարթօնքով ու նաև կրօնական, հոգևոր ապրումների ճառագայթումով:

Այո, յատակ իրողութիւն է, որ Հայաստանի ու Արցախի մեր ժողովուրդը իր ազգային ինքնութեան արմատները որոնելու ճանապարհին, հասնում է նաև իր կրօնական առաքելներին, իր ազգային մայր Եկեղեցու, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու ոգեկանութեան ակունքներին:

Զարմանահրաշ երևոյթ է, որ մեր ժողովուրդը, մանաւանդ աղէտեալ շրջաններում, դեռևս անհամար զրկանքների մէջ, դիմում է Մեզ, դիմում է մեր հոգևորականներին ու աղերսում, որ նոր եկեղեցիներ բացուեն, որ Սուրբ Գրքեր և խաչիկներ բաժանուեն:

Մենք յուզումով ենք յիշում, երբ անցեալ Դեկտեմբերի 11-ին, երկրաշարժից չորս օր յետոյ, աւերակ Լենինականի հրապարակում գտնուած ժամանակ, Ամենափրկիչ փլուած եկեղեցու աւերակների առաջ, Մեր շուրջը հաւաքուած բազմահարիւր ժողովուրդը, իր անասոր վիշտը, իր մեռելները կարծէք մի պահ մոռացած, դիմում էր Մեզ, թէ՝ «Վեհափառ, ե՞րբ էք վերականգնելու մեր սուրբ Տաճարը»: Եւ այս վերջին ամիսներին, ամէն կողմից դիմումներ են հասնում Մայր Աթոռ՝ նոր եկեղեցիներ բացելու և հները վերանորոգելու: Սպիտակի ժողովրդի աղերսը այս օրերին աղաղակի է վերածուել, նոր եկեղեցի կառուցելու այնտեղ, ի յիշատակ ամբողջ աղէտեալ շրջանի զոհերի: Առայժմ մի վարդապետ ենք ուղարկել այնտեղ հաւաքների մի տնակում եկեղեցական արարողութիւններ կատարելու:

Աւելին, մի քանի օր առաջ, նոր թախանձագին դիմումներ կատարուեցին Մեզ՝ Ստեփանաւանի և Կիրովականի աղէտեալ ժողովրդի կողմից, որոնք պահանջում են աւելի ընդարձակ եկեղեցական նոր շէնքեր ունենալ,

քանի որ իրենց եկեղեցիները թէև չեն քանդուած, սակայն փոքր լինելով չեն բաւարարում բազմահազար հաւատացեալների հոգևոր կարիքներին:

Բայց ոչ միայն աղէտեալ գոտում, հոգևոր զարթօնքը ճառագայթում է նաև Արցախում ու Հայաստանի միւս շրջաններում, ուր բազմահարիւր մկրտութիւններ են տեղի ունենում ամէն շաբաթ և կիրակի օրերին:

Մենք և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ-ը բուռն, ցնցող ապրումներ ունեցանք Մեր ուղևորութեան ընթացքին՝ Եղեգնաձորում, Սիսիանում, Գորիսում և Տաթևում՝ տասնեակ հազարաւոր ժողովրդի արտի արտփիւնը զգալով ու նրա վերընձիւղած հաւատքը դէպի Հայաստանեայց մայր Եկեղեցի, իբրև յոյսի և մխիթարութեան ու հոգևոր փրկութեան աղբիւր: Հեռու երկրներում բնակուող մեր զաւակներից շատերը գուցէ դժուար հասկանան այս աքսանչելի երևոյթը:

Ստոյգ իրողութիւն է, որ այսօր հայաստանցին, հայոց դաստիարակ մայր Եկեղեցու կամարների ներքոյ, գտնում է հոգեկան նեցուկ, ապաւէն ու ազգային ինքնութեան ստուգութիւն: Եւ Մենք գոհ ենք յոյժ, որ այս հոգեկան ապրումների մթնոլորտի մէջ մեր Եկեղեցու սպասաւորները՝ եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանաներ, բոլորը երիտասարդներ, փորձում են իրենց պարտքը կատարել հաւատքով ու նուիրումով, մանաւանդ աղէտեալ շրջաններում և նորաբաց վանքերում ու եկեղեցիներում Սիւնեաց աշխարհում և Արցախում: Մեր առջև դրուած է մեծ ու պատասխանատու խնդիր՝ աճեցնելու թիւը մեր երիտասարդ հոգևոր մշակների: Այդ իսկ նպատակաւ այս տարի մեր Հոգևոր Ճեմարանի ուսանողների թիւը բարձրացրինք եօթանասունի:

Զարմանալի երևոյթ է նաև մեր ժողովրդի և մտաւորականութեան՝ հոգևոր ու ազգային հպարտութեան հասնող զգացողութիւնը, Հայաստանի քրիստոնէացման 1700-ամեակին նուիրուած՝ Երևանում մի յուշարձան եկեղեցի կառուցելու աւետիսին ի լուր, ծրագիր, որ Մենք յուսով ենք, թէ այժմեան ծանր օրերը անցնելուց յետոյ, կեանքի կը կոչուի 2001 թուականին:

Անհասանելի Մեր մխիթարութիւնը այսօր, Մեր յոյսերը, Մեր ապաստանները և մանաւանդ մեր աներեր հաւատքը յաղթահարելու ամէն դժուարութիւն, բեկանելու չար ուժերը: Եւ ինչպէս նահատակ մեծ բանաստեղծը, կանգնած մեր ճակատագրի ճանապարհին, ուխտենք՝ «Մենք զաւակներդ օգոստափառ, պիտի կերտենք նոր Արշալոյս»:

Սիրեցեալ հաւատացեալներ Մեր, արթուն և ինքնավստահ, փոխադարձ սիրով ու միասնական՝ գնացէք դէպի կեանք, դէպի հայրենանուէր աշխատանք, դէպի յաղթանակ:

«Հոգով եռացէք, Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստէպ կացէք... եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան խաղաղութիւն կալջիք» (Հռոմ. ԺԲ 11—18): Ամէն: